



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Q U U P U A

P U P U P U

upward to your right hand
upward in the left hand



Lucy

1021

1856

891.99
7-39 42

2013 -6 NOV 2011

ФУНДАМЕНТАЛЬНАЯ БИБЛИОТЕКА
ЛАЗАРЕВСКОГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ

Лук
1021

Մ Մ Մ
Տ Տ
Ք Մ Ք Պ Մ Ք

ԱՂՁԿ ԵՒ ՉՍՓԱԲԵՐՍԿԱՆ

Աշխատութիւններ:

№ 403

№ 2.

Critique est facile,
L'art est difficile.

Ս. Պ. ԲՈՒՐԳ.

Կոնստնտնուպոլիսի տպարանումը.

1856.

0107
6119

Перевестена Публичному

1705 1001 9-

76

Печатать дозволяется съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный комитетъ узаконенное число экземпляровъ, С. Петербургъ, Іюня 16 дня 1856 года.

Ценсоръ В. Бекетовъ.

201 W

0101
2117



1021-2013

7.8.1016

(Նուէր բարեկամական Մ: թիմուրեանին:)

Блаженъ незлобивый поэтъ,
Въ комъ мало желчи, много чувства!...
Некрасовъ.

Քաղցրախոս՝ ս պովէտ՝ քու անոյշ լեզուն,
Քնարըղ ներդաշնակ, հոգիդ բզգայուն —
Աշխար գրաւեցին. դաժնեղարդ գլխով
Դու ժուռ ես գայլի մարդկանց մէջ շքով:
Քեզ սիրեց աշխար, — սիրեց սերտ սիրով,
Արահեա ուղիդ փրօսեց վարդերով.
Համբարդ հեռու աշխարհներ հասցուց,
Քեզ արժանացուց դիւցազանց դասուց.
Ու դեռ քու հոգին չ'էր ելլել մարմնից,
Նա քեզ արձաններ կանգնեց մետալից:
Քեզ սիրեց աշխար եւ սիրեց — իրօք,
Օ՛ր անոյշ լեզուէդ չի լրսեց վատ խօսք.
Լարերիդ երբէք չի տուիր դադար,
Երբ-որ գովէրու ունէիր պատճառ.
Բայց երբ-որ բասրել պէտք լինէր չարին՝
Քնարըղ իսկոյն կախվում էր պատին:
Քու ասպարէզն էր դինառատ խընջոյք,
Քեզ պատում էին կանանց, կուսից հոյլք.

Վարդ էր տեսածը՝ վարդ էիր երգում:—
Փրշեց, տատասկից միշտ հեռի փակուցում:...

Այլ էր վիճակը մի այլ պովետին,
Անհատ թրշնամի կարծած ամենին,
Որին ըսկրած փոքրից մինչև մեծ՝
Մարդկութեան ցեղի անուանեցին ցեց:
Դա՛ն էր վիճակը, դա՛ն էր կոչումը
Այդ տարբարողին. դրսում՝ ո՛չ տունը
Ունէր նա հանգիստ. ծրնրնդեան օրից
Սիրոյ մի նրշան չի տեսաւ մինից:
Լեղուն — մահաթոյն ասացին մարդիկ,
Ճարտար խօսուածքը — չարութեան գործիք,
Եւ այն հանձարը, որ նորա բաժին
Տուաւ ՚ի վերուստ — մարդիկ ջանք-արին
Թաղել ցեխի մէջ իրանց վատ կենաց,
Որի մէջ ինքեանք էին թաթախուած:
Բայց նա միշտ հըսարտ՝ մընաց հաստատուն,
Հանձարն էր նորա միակ ձեռնածուն,
Անդողոջ ոտքով անցաւ այս աշխար
Հողին անվրդով, ճակատը սայծառ.
Եւ մինչեւ վերջին բողեն իր կենաց
Սրբոյից չի հանեց հառաչանք, ո՛չ լաց:
Բայց երբ-որ նորա անշնչցած մարմինն
Օղբերի սողնոց եղաւ լոկ բաժին,
Եւ երբ շատ դարեր գընացին, անցան, —
Լոկ այն ժամանակ մարդիկ իմացան
Այն աղնիւ սէրը սրբոյի մէջ փակած,
Որ կոյր աչքերուն էրբէք չերեւաց.
Իմացան, որ կար նա եւ այնպէս սէր,
Որ հաստ փաթաթով ծաղրի սպտած էր.
Որ քարկոծ արին այն խեղճ բրժիշկը,
Որ ցաւով՝ նոցա բրժիշկեց վէրբը:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

(Աշխարհագրական).

Այս բնդարձակ եւ գեղեցիկ աշխարհ պարտիակած է Ափրասիա գետի
և Կաւկասեան սարերի մէջ, որ հարաւի կողմից հասնում է մինչեւ
Դիարբէքի աշխարհ (Ճարօեքիբ): Մի ժամանակ Հայաստանը
հզօր տէրութիւն էր, որի ծագումը հասնում է մինչեւ ժ.Վ դարը Յի-
սուսի-Քրիստոսի ծրնունդից առաջ: Այն ազգի պատմութեան ըս-
կիցը պատած է թանձր եւ անթափանցելի խաւարաւ. բայց քիչ մարդ կը
գըտնուի, որ այս արժանայիշատակ երկրի վրայ ծանօթութիւն առած
չըլինի Սրբազան գրքերից: Վէրջի ժամանակները Միհրդատի եւ Տիգ-
րանի Հռովմայեցոց հետ ունեցած արկնահեղ մարտերը մեծ լոյս ձը-
գեցին Հայաստանի վրայ, որին-որ սուրբ մատենագիրները «մարդկո-
թեան ազգի օրօրոց» են անուանում: Հատ անգամ Ասորեստանի եւ
Պարսից հզօր թագաւորները ուղել են լուծի տակ ձգել Հայաստան.
բայց քաջ եւ արի Հայերը միշտ աշխատել են իրանց ազատութիւնը
պահպանել, մինչեւ-որ Հայաստան դարձաւ Հռովմայեցոց դաւառ. յե-
տոյ ընկաւ Պարսիկներու եւ Թուրքերու ձեռք: Վէրջի ժամանակներըս
Ռուսերը տիրապետեցին նորա մեծ մասին եւ հետոյհետէ յառաջացնում
են այդ աշխարհակալութիւնը:

Հայաստան ծածկած է մեծամեծ սարերով, որոնք ձուղ ձուղ բաժա-
նուելով՝ մի բազմաձեւ եւ սքանչելի տեսարան տալիս են երկրին: Մի
քանիսի դազաթը բարձրութիւնով գրեթէ հաւասար է «Պիրինեան» (՝)
երեւելի սարերին, որով եղանակը այնքան ցրտացած է, որ շատ անգամ
ապրիլին, նաեւ մայիսին ձիւն է գալի այնտեղ: Արդ ըստի ձմեռը ա-
ւել ցրտաշունչ է քանթէ Փարսիցի: Հայաստանի հիւսիսակողմի ձրմեռը
աւել բարեխաան է եւ ամառը չափազանց տոթ (տաք): Դաշտերը եւ հո-
վիտները սրտազարբ են. բաց օդի տակ բըննում եւ աճում են ամենայն
սերմերը եւ սրտուղները, որոնք-որ դուրս են գալի Փրանսիաի հարա-
ւային կողմը: Քանի-որ հայերը Ռուսաստանի հովանաւորութեանը ներ-
քոյ պաշտպանուած են բարբարոս ազգերի յարձակութիւններից՝ մեծ յա-
ռաջողիմութիւն են անում երկրագործութեան մասին. շատ ժամանակ չի
անցնիլ երբ-որ հայ երկրագործները քաջ ախոյան կըհանդիսանան Աւ-
րոպաի լուսաւորեալ ազգերի առաջ: Հայաստանի տարածութիւնը գրեթէ

հաւասար է Ֆրանսիային: Բնակչաց թիւը հասնում է մինչեւ 2,800,000. գուցէ մի այդքան-էլ այսկողմ՝ այնկողմ՝ գաղթած լինին. բայց եւ այնպէս՝ քաղաքները սակաւամարդ են: Հայաստանի արուեստաւորները չեն խրոնրվում մեր աշխարհի (յի՛ Ֆրանսիայի) պէս քաղաքներումը, եւ ըստ մեծի մասին զբաղած են մշակութիւնով: Բնակչաց անհոգութիւնը, երկարատեւ մարտերը (կրօնները), Քուրդերու յարձակմունքը — եղան դլխաւոր պատճառը, որ զրկեցին այս գեղեցիկ երկիրը այն մեծամեծ օգուտներէից, որ նա պէտք է ունենար անտառներից: Բայց այժմ Ռուսաց կառավարութիւնը մեծ ջանք է դնում պահպանել այն, ինչ-որ մընացել է, եւ քաջալերում է անտառաբուծութիւնը (лесоводство): Պէտք էր որ՝ ծառասնկութեան մասին նոյնը անէին Հայաստանումը, ինչ-որ մեր օրերումը անում են բոլոր բարձր Իտալիանումը, ի՞նչ ճանապարհների երկու կողմը տղնկէին պրտղատու ծառեր, որից մեծ օգուտներ կըյառաջանար ժողովրդի համար, իսկ ծախար այնքան թանկ չէր նստիլ նոցա:

Ամեն տարի Հայաստանից մեծ գումարի մեղրամիւս տանում են Ստամբուլ եւ Ռուսաստան: Սեղրի որակութեանը համար ասելն-էլ աւելորդ է ամենին յայտնի է, որ Հայաստանի մեղրը իւր հոտաւէտութեամբ եւ քաղցրութեամբ անհամեմատ է: Թխենիների (թութի ծառերի) թիւը անհամար են. բայց տարբարզաբար հայերը չ'զիտեն սպրշում մանել եւ կերպաս (шелковая матерія) շինել: Եթէ ճարտար արուեստագէտները վրտասէին ծաղկեցնել վաճառականութեան այս ճուղը՝ կարող էին մեծամեծ օգուտներ ձեռք-բերել: Հայաստանի նման ոչ մի երկիր չի բըրցնում խաշնեղ (ревень). եւ մատուտակը (солодковый корень), որ առանց մշակի հոգացողութեան բըրնում եւ աճում է ստորին վայրերումը եւ մանաւանդ Արարսի երկայնութեամբ՝ — հազարապատիկ գերազանցում է Սլամիտում եւ Ռուսաստանում գուր-եկածներից: Հանքային բերքերու (минералы) կողմանէ դարձեալ Հայաստան հարուստ է. հին ժամանակներից սկսած՝ այնտեղի հանքերից (рудникъ) հանում են՝ — արծաթ, պղինձ, մագնիս-բար, բորակ (селитра), ծծումբ եւ կոււր:

Հայաստանի սարերի մէջ Արարատը ամենից բարձր եւ նշանաւորն է. նորա վրայ շատ մենաստաններ կան, որոնց մէջ է եւ երեւելի Սուրբ-Յակոբ հայրապետի վանքը, ուր իջեւանել են Արարատի վրայ բարձրանալ ցանկացողները. բայց այդ ցանկութիւնը, ինչպէս յայտնի է, միայն պարոն Պարրօտին յաջողեցաւ 1830 ին: Այս գիտնական դասախօսը (профессоръ) ասում է թէ՛ Արարատի դաղաթը 16,000 ոտնաչափ բարձրութիւն ունի եւ վերջանում է տափակ մակերեւոյթով, որի միջկտուրը (диаметръ) 200

ոտնաչափ է: Թե՛ այդ ճշմարիտ է՝ ուրեմն կարելի է հաւատալ եւ այն ենթադրութեան եւ աւանդութեան Սրբազան Գրքին, որ հաւատացնում է թէ՛ յետ համատարած Ջրհեղեղին՝ Եոյայ Տապանը ինչաւ Արարատ սարի դաղաթը: Բայց Պարրօտ չի տեսել Տապանի կտորները, ինչպէս-որ հաւատացրել են նորա՝ իբր թէ մինչեւ այսօր նշխարած մնացել են: Թուռնփօռն-էլ փորձեց ելլել Արարատի վրայ՝ երբ-որ ճանապարհորդում էր Հայաստանումը, բայց անյաջողակ:

Հատ վտակներ եւ անհամար առուակներ ողողում են Հայաստանի երեսը, որ բաց ՚ի դորանից ունի նա եւ մեծամեծ լիճեր: Երբա գլխաւոր գետերն են՝ Եփրատ, որ անհամար աղբիւրներ իւր մէջ ամենելով՝ Արդրումի մօտ կաղնում է մեծ գետ. յետոյ գնում է դէպի արեւմուտք, եւ ապա հարաւ, եւ խառնուելով Տիգրիսի հետ եւ անցնելով միասին 250 մղոն (մօտ 1000 վերստա), ընկնում է Պարսից Ծոցը: Տիգրիս նմանապէս սկսում է Արարատ սարից: Արաքս կամ Երասխ, որ առնելով իւր մէջ շատ վտակներ՝ ընկնում է Կասպից ծով: Կուր (Քուր) սկսում է Ղրաստանումը, յետոյ մըտնում է Հայաստան, խառնելով Արարսի հետ եւ կորցնում է անունը: Աշխարիա երեսին ոչ մի երկիր չի կայ, որ Հայաստանի նման յաջողութեամբ ողողած լինի. առ այնու՝ եթէ միտերս բերենք այն մեծամեծ օգուտները, որոնք կարող էին քաղել Աւրոպացիք իրանց քաղաքավարութեամբ եւ ճարտարութեամբ, այնժամանակ համարձակ կարելի էր ասել, որ Հայաստանը Ռուսաց ընտիր եւ ծանրակշիռ յաղթութիւնն է: Կատելի է, որ Հայաստանի ամեն լիճերը աղի են. նոցանից ամենից լայնատարածը, որ Վան է ասվում՝ խիստ առատ է ձկներով. բայց նորա ջուրը քանի գնում է՝ բարձրանում է ափերից եւ ծածկում է շրջակայ տեղերը. այս յորդութիւնը է պատճառը, որ Վանի արուարձանը (предмѣстье) գրեթէ անմարդաբնակ է. այս յայտնի էր Համիրամ (*) դշխոյի ժամանակները, որ դոյն այդ պատճառով հրամայեց ահագին թումբեր (плотины) շինել, որոնց փլատակները մինչեւ այժմ երեւում են:

Բայց այն-էլ պէտք է ասել, որ թէ եւ Վանի ափերը խիստ բարձր են, բայց ունին մի քանի արձակ տեղեր, ուրտեղաց-որ կարելի է սահանքներ (плосзы) բանալ, որ նաւարկութեան համար ջրանցքներով ջուր բաշխուի երկրին: Հայաստանի վայրենի կենդանիները խիստ բազմաթիւ են. դորա պատճառը երկրի սակաւամարդութիւնն է. թէ որ անբնակ տեղերը կամաց կամաց բազմամարդանան՝ կենդանիները եւս կ'անյայտանան, որովհետեւ Հայաստան չունի վայրի անապատներ, ուրտեղ կարողանային նորա արաստան գանել: Արջը, գայլը, լուսանը (рысь), աղուէսը, շնագայլը կամ

ուկեգոյն գայլը (шакал), վայրի կատուն, նասաւտակը, ճագարը (кролик), շատ տեսակ թռչուններ եւ հաւեր սովորական են Հայաստանումը. բայց թիւնաւոր սողուններ հազուադէպ են: Այժմեաները (серна) այնքան շատ չեն, ինչպէս-որ Վաւկասի սարերումը, սատառ-որ՝ Քարծր Հայք (Հայաստան) խիստ ցուրտ է: Հայաստանի առանին կենդանիներն են՝ ձի, ջուրի, եղջ գոմէշ, ուղտ, էշ: Եղջը եւ գոմէշը մշակում են դաշտերը. ուղտը եւ ջուրին գործածվում են տեղէ տեղ բեռ տանելու համար, էշը ծառայում է աւել թեթեւ գործածութեան եւ կարճ տարածութեան:

Հայաստանի ձին (նժոյգ) խիստ մեծ անուն ունէր հին ժամանակներումը բոլոր Ասիայի մէջ. հասակը միջակ է, ինքը ուժեղ, խաղաղիւն, անխոնջ եւ արագընթաց:

Հայոց բարբը շատ տարբերում է նոցա դրացի աղբերից. հայերը բընութեամբ խիստ խաղաղ են, իրանց հաւատին ջերմեամբ. բայց ուրիշ աղբերու սէս չեն հալածում այլակրօններուն: Խիստ ծանրաբարոյ են, աշխատասէր եւ գործուեսայ. վաճառականութեան մէջ յաջողակ, թէ եւ գիտութեանց մէջ դեռ եւս մեծ յառաջադիմութիւն չեն ցոյց-տուել:

Եկեղեցւոյ առաջին դարերէն սկսած՝ հայերը բրիտանուեսայ են. բայց չեն վերաբերում ո՛չ Յունաց եւ ո՛չ Քաթօլիկաց եկեղեցիներուն, այլ ունին իրանց համար Եջմիածնայ վանքումը սեպհական Պատրիարք, որին շատ յարգում են:

Ռուսաստանի Հայաստանի բնակչաց մէջ միայն 2/5 բոլոր մասը հայեր են. մնացած 3/5 բոլոր մասը մահմեդականներ, յոյներ եւ լատինադաւաններ են. տեղ տեղ գրանվում են նա եւ հրէաներ, բայց նոցա առուտուրը այնքան յաջողակ չէ, սատառ-որ ինքեանք հայերը այդ մասին խիստ աչքաբաց են: Բոլոր արեւելքումը եւ Ռուսաստանի տեւն ծակուծուկերումը հայերը իրանց ձեռքն են առել վաճառականութիւնը եւ մեծամեծ հարստութեան տէր են դարձել:

Հայաստանցիք՝ թէ տղամարդիկ եւ թէ կնիկ-արմատները առհասարակ թէ աղնուականաց եւ թէ վաճառականաց վիճակի մէջ՝ սիրում են շքեղ եւ թանկագին հագուստներ. ընդհակառակն՝ արուեստաւորների եւ մշակների շորերը սոսկական են, բայց մաքուր: Օգետտի ձեւը բոս ամենայնի նման է թուրքաց, միայն այն տարբերութեամբ, որ հայոց կանանց գլխաղարդը աւել բարձր եւ կոնաձեւ է, որի ցածի կողմը վերջանում է մետաքսէ բոլորակով. ճակատը բաց է մնում: Այս գլխաղարդը կրկնապատուում է հայերու բնական գեղեցկութիւնը: Բուն Հայաստանի հայերը առհասարակ բարձրահասակ են, եւ նոցա դիմաց դժագրութիւնը աղնիւ եւ ուղիղ է:

Կնանիք գլխի վրայ դնում են մետաքսէ շրջանակ եւ նորա վրայից ձգում են բոզ: Տղամարդիկ սովորաբար արտասոււրակ (турбан) գործածում են, որ զարդարած է լինում թանկագին ժապաւէններով եւ փունջերով, որոնք ընկներով նոցա ուսերու վրայ՝ չափազանց գեղեցկութիւն են տալի գլխաղարդներուն: Արք եւ կանայք առհասարակ գործածում են երկայն գզեատ:

Հայերու սեպհական արժանաւորութիւններն են՝ մաքուր բարբ, սակաւապիտութիւն (умѣренность) եւ տընտեսութիւն:

Հայ վաճառականը որքան-էլ հարուստ չլինի, թէ եւ յարտաբուստ, առերեսը ստիպուած է շատ անգամ շոյլութեամբ սարելու, բայց նորա առտընին սարուստը միշտ չափաւոր եւ բարեկարգ է. այս հանգամանքը պատճառ է տուել շատերին կարծելու, որ նոքա աչքածակ եւ արծաթամուկ են. բայց իրօք նոքա միայն տընտես են, սատառ-որ հայերը եւ նոցա մէջ մանաւանդ վաճառականները եւ լումայափոխները շատ անգամ ցոյց-տուել են մեծանձնութիւն եւ անընչասիրութիւն:

Հայաստանի գլխաւոր քաղաքները դոքա են. —

1) Արդր ոււմ: այս մեծաշէն եւ հին քաղաքը հիմնած է բարձրադիր եւ ցուրտ տեղումը՝ չորս կողմից սարերով պատած: Նորա մէջի հայերու թիւը սակաւ է. քան թէ թուրքաց: 1827ին ուսերը առ ժամանակ տիրապետեցին նորա: Ունի միջնաբերդ (цитадель, кремль) մի բարձրաւանդակի վրայ: Վաճառականութիւնը մեծ եւ ընդարձակ է: Թէ եւ քաղաքը լայնատարած է, բայց խիստ վատ շինած. տները ցած, տղեղ, տափակ կտուրներով: Շրջակայ տեղերը ընդհանրապէս քարքարուտ, անջրդի եւ ամաշացած են: Բնակչաց թիւը 80,000 է:

2) Վան շինած է այդ անունով ծովակի տի: Դորա հիմնադրութիւնը ընծայում են Համիրամ դշտային: Բաղնիսթիւ յիշատակարանները, որոնք մի ժամանակ զարդարում էին նորա՝ այժմ աւերուած ընկած են, եւ այդ աւերակները միայն կարող են մեզ գաղափար (идея) տալ նորա առաջուայ շքեղութեանը վրայ: Միջաբերդը շինած է մի բարձր սպառաժի վրայ եւ այդ պատճառաւ համարձակ կարելի է ասել, որ նա անառիկ է: Բնակչաց թիւը հասնում է մինչեւ 20,000:

3) Երեւան հիմնած է այնտեղ, ուր-որ Արարսի եւ Օանգիի ջրերը խառնվում են իրար հետ. դորա մօտից անցնում է մի երրորդ եւ աննշան գետ, որից արուեստական կերպով դուրս-հանած են ջրանցքներ, որոնք երաշտի (անձրեւի պակասութիւն) ժամանակները ցողում են այգիները եւ պարտեղները: Բերդը, որ պաշտպանում է քաղաքը՝ խիստ ընդարձակ է:

դորա մէջ են կրպակներէ (դուքան) մեծ մասը, ուր-որ արուեստաւորները
զալիս են աշխատելու. իսկ երեկոյան սրահու գնում են քաղաք, ուր նոցա
ընակարանն է: Արեւանի չորս կողմը սրտած է փլատակներով, որոնք
վերաբերվում են նախնի դարերուն: Արեւանի գեղազուարճ եւ բարերեր
դաշտերումը արնկած են գեղեցիկ այգիներ: Արարատ սարը հեռու է
նորանից: Բնակչաց թիւը 15,000 ի մօտ է:

(Ֆրանսերէնից թարգմանած).

Հայ-աղջիկ

Դու տեսն'լ երկինքումը

Պայծառ լուսին ծաղեղիս,

Սամ թէ՛ կանանչ տերեւի մէջ

Վարմիր ծիրան փայլելիս.

Դու տեսն'լ ես ծաղկոցումը

Վարմիր վարդը փրթրթած,

Հուշան, մեխակ ու նունուֆար

Չորս բոլորը սար-բընած.

Բայց լուսինը խիստ խաւար է

Հայ աղջկայ առաջին,

Ծիրան, մեխակ ու նունուֆար

Չ'աժեն նորա մի սաչին:

Երկու թըշն վարդ են նրատել

Ղերմակ ճակտին՝ մի շուշան.

Ժպիտը բերնից ցած չի գալի, —

Անմեղութեան է նըշան:

Տե՛ս, նա առաւ կարմրելով

Իբ ընկերից դա՛հ իրան,

Դրըմ'դրըմբեցուց փափուկ մատով

Ու լսկըսեց լեզու ինչ կան.

Նաղուք մէջքը ծառի նըման

Տատանում է գեղեցիկ,

Մէկ թըռչում է նա անգուման,

Մէկ գընում է խիստ մեղմիկ:

Հալվում է խեղճ կտրիճների

Սիրտը՝ նորա նայելով

Ծերն իրան անիծում է,

Որ ծերացաւ խիստ շուտով:

ՄԻՆԻԹԱՐ ԱՐԻԱՅ

Առնին յայտնի է, որ Սուրբ-Մեսրոպ յօրինեց (հնարեց) մեր սյրբենը
Արորդ դարուն, որից յետ մի ամբողջ դար հայոց գրականութեան (առ-
տերապր) համար ոսկի էր անուանվում: Թէ եւ նորանից յետոյ մինչեւ
ԺԳ երորդ դարը հրաշալի գրուածներ անսակաս էին, բայց չիկար արդէն
այն եռանդը (усердие), որով վառուած էին Սուրբ Գրոց թարգմանիչը, եւ
հետոհետէ անհետանում էին ազգային գրականութեան սասարիղից հայ-
կարանութեան քաջ ախոյանները, այնպէս որ մինչեւ ԺԳ երորդ դարը,
երբ-որ մեր քաղաքական գոյութիւնը աւերուեցաւ, մեր աշխարհ ոտնակոխ
եղաւ՝ մի հաստ օրինաւոր գրուած էր գրանրվում մեր լեզուումը, մի հաստ
վարժատուն չի կար, ուր-որ երեկայք կարողանային կրթուել բայց ինչ
եմ'ասում, ցանկութիւն-էլ չի կար ազգի մէջ. — այնքան էր նեղութիւն կրել
թշուառ Հայաստան:

Երբ-որ ԺԳ երորդ դարից յետ հայոց գրականութիւնը առաւել եւ ա-
ռաւել սկըսեց նուազել ԺԿ երորդ դարումը շատ մարդիկ, ինչպէս՝ Յա-
կոբ Լջմիածնեցին, Կոյոզ Ստամբուլցին եւ շատ աշխատեցան, որ նորա
նորածութեանը ձեռնառ լինին. բայց վերին Խնամքը ուրիշ ժամանակի
եւ ուրիշ մարդու նշանակել էր այդ երեւելի գործի կատարումը: Այդ
ժամանակն էր ԺԶ երորդ դարը եւ այդ մարդը՝ Մխիթար Արբան:

Մխիթար ծնաւ 1676 ին, փետրուարի 7 ին, Սերաստիա քաղաքի մէջ:
Հօրը անունը էր Պետրոս Մանուկեան եւ մօրը՝ Հահրիստան: Առաջի
կրթութիւնը ստացաւ երկու բարեկրօն կոյսերից, որոնցմէ մինի անունը
Մանաս էր, իսկ միւսինը՝ Սարիամ: Հատ աշխատասէր եւ սրբիկշտ
մանուկ գօրով 14 տարեկան սարկաւազ ձեռնադրուեցաւ, եւ 20 տարեկան
քահանայ: Փոքր ինչ ժամանակից յետ ստացաւ վարդապետական դաստիարակ
եւ այդ բոսկից մի վե՛հ (возвышенный) միտք ծնաւ նորա մէջ. այդ միտքն
էր կրօնական կարգ (орден) հիմնել, որոյ միջնորդութիւն Հայոց ազգի մէջ
եկեղեցական եւ հոգեւոր լուսաւորութիւն մուծանել: Այդ պատճառաւ
գնաց Ստամբուլ եւ ուրիշ տեղեր, որ հայոց մեծամեծաց ձեռնառու:

Թեամբ կարողանայ իրա մլտադրութիւնը (намерение) կատարել: Բայց նորա ճիւղը ոչ մի տեղ չի յաջողեցաւ: Վերջապէս ընակեցաւ Ստամբուլը եւ իւր հիանալի գրուածքներով 16 հատ աշակերտ ժողովեց, որոնց հետ թարգմանեց Թալմաս Աբմբայի շարագրութիւնը, եւ դիրք կազմելով իրա ասրուստը ճարտարէր: Այդ ժամանակ Ստամբուլի հայոց Պատրիարքն էր Աւետիքը (*), որ մեծ թշնամի էր լատինահասաններուն: Տեսնելով Սլիթարի լատին կրօնաւորներու մօտ շուտ շուտ գնալ-գալը, նմանապէս նորա քարոզչերի մէջ զանազան կասկածելի միտքեր սրտագելը իւր սովորութեամբ հրամայեց, որ զինուորները երթան բրնձն նորա եւ բերն իւր մօտ: Սլիթար լաւ հասկանալով վտանգը՝ կազմարարական կահ կարասիրը հարեւաններու սահ-տուեց, ու ինքը գնաց Ազուխներու (*) մօտ, խնդրելով, որ նորան մի սենեակ տան: Բայց նորա երկն չելով տեսութիւնից՝ հրաժարուեցան, եւ խորհուրդ տուին, որ Քրանսիացաց ղեկավանի (посланникъ) մօտ երթայ: Սլիթար վտանգը դուրսը առած՝ գնաց ղեկավանի մօտ. բայց որովհետեւ Վասուցիներու (*) վանքը հեռու էր, ընակեցաւ այնտեղ իւր երկու աշակերտի հետ: 1701 ին սեպտ' 8 ին հաւարեց աշակերտներուն եւ Աստուածածնայ հրաշափառ օրը առաջարկեց նոցա կուսակրօն կեանք ընդունել, որի յիշատակ ամէն տարեգարձին (годовщина) տօնել այդ նշանաւոր օրը: Միւս օր Սլիթար ուղարկեց աշակերտներին մի-մի, երկու-երկու Սոա (Պերպունեղ կրդի) եւ ինքը ամենից յետ վաճառականի հաղուստով նստաւ նաւ եւ ճանապարհին ալեկոծութեան հանդիպելով՝ հասաւ Օսմեթա կրդի: Տեսնելով-որ այնտեղի օղը շատ բարեխառն է՝ գրեց աշակերտներուն, որ նորա տեղեակ յայտնեն Սոաի օղի մասին, որ կարողանայ երկուսից մինը ընտրել: Այդ-որ խնայաւ, որ թէ՛ եւ Սոաի օղը աւել ցրտաշունչ է, բայց այնտեղի Վենետիկաց իշխանը լաւ ընդունելութիւն է արել նոցա՝ 1703 ին փետրուարի ամսին գնաց Սոաի Սէթն քաղաքը, ուր-որ իշխանը նորա աղաչանքին ինջնելով՝ ընծայեց նորան եկեղեցի եւ վանք շինելու եւ ասրելու տեղ, նա եւ մի ամբողջ դիւղ եւ մի ուրիշ դիւղի-էլ մասը: Յետոյ սկսեց իրա աշակերտներին կամոց-կամոց կանոնի տակ ձգել, կրթելով նոցա քերականութեան, աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան մէջ: Աշակերտներից մի քանիսին ուղարկեց Հոսով՝ խնդրելով Ալեմետ ԺԱ երրորդ Պապից յօժարութիւն Սուրբ-Բենեդիկտի (*) կարգի ձեւով կրօնաւորաց կարգ հիմնելու. եւ երբ-որ թոյլտուութիւն ստացաւ՝ եւս առաաւել սկսեց իւր աշակերտներուն կրթել, եւ այդ կերպով խիստ սիրելի եղաւ բոլոր քաղաքացուց աչքին իւր համեստ վարքով: Թէ եւ Սլիթար փողի մասին

մեծ կարօտութիւն էր քաշում, բայց յոյսը Աստուծոյ վրայ դնելով՝ ինքը իրան մըխիթարում էր: Ահա՛ այդ ժամանակները ընդունած պիտի լինի նա լատինակրօնութիւնը (քաթօլիկութիւնը): Բաւական չի համարելով այդքան նեղութիւնները՝ Սլիթարի թշնամիք նամակ գրեցին Հոսով, որով ամբաստանում էին նորան. բայց նոցա ջանքը ՚ի դերեւ ելաւ:

Այդ ժամանակ սաստիկ մարտ (կռիւ) բացուեցաւ Վենետիկացու եւ Թուրքաց մէջ. եւ Սլիթար կարծելով գուցէ Սէթն քաղաքը առնուի՝ 7 աշակերտ թողեց Սոաի մէջ վանքը սահելու համար, մնացելով 11 ի հետ գնաց Վենետիկ, ուր վարձով (քրէհով) բրնձնց մի տուն: Պէտք է իմանալ, որ այդ միջոցին նորա ունեցած-չունեցածը 250 դուռուշ (пиастръ) էր, որ Ռուսի փողով 50 ուրբի թղթադրամ է: Այդ-որ Թուրքերը առին Սոան եւ քանդեցին նորա վանքը եւ եկեղեցին՝ նա ձեռնամուխ եղաւ մի նոր վանք հիմնելու: Վենետիկի ծերակոյտը (сенатъ) ընծայեց նորան Սուրբ-Ղազար կղզին, ուր-որ այդ անուամբ հիւանդանոց կար: Այդտեղ շինեց նա 1717 ին մի գեղեցիկաշէն վանք եւ նորոգեց եկեղեցին: Սլիթարի թշնամիք տեսնելով նորա յառաջադիմութիւնը՝ վերատին ամբաստանութեան (доносъ) թուղթ գրեցին Հոսով: Պապը կանչեց նորա դատաստանի. բայց Սլիթար արդարացուց իրան Պապի առաջ, որովհետեւ իրաւ անմեղ էր, եւ մեծ սրտուով դարձաւ Վենետիկ, ուր վանքի մէջ մի փոքրիկ դպրոց եւս բացեց: Այդ ժամանակից յետ մինչեւ իւր մահը (1749) Սլիթար անձանձիր սարսաղում էր շարագրութիւններով եւ թարգմանութիւններով, որոնց մէջ գլխաւորները դոքա են՝ մեկնութիւն Աւետարանին Մատթէի եւ մեծ բառարանները, որոնց նման այն ժամանակները ոչ մի ազգ չունէր: Սլիթար իւր երկար կեանքումը շատ նեղութիւններ եւ հալածանք քաշեց, բայց հայրենասիրական ոգւով վառուած՝ ամէն բան մեծահոգութեամբ տարաւ, եւ իւր միարանութիւնից անուանեցաւ Արայ Հայր:

Թէ եւ այդքան մեծադին արժանաւորութիւններ ունի, եւ նորա անդիւնքը մեծապէս ձեռնտու եղան մեր ազգի լուսաւորութեանը, բայց արդարասիրութիւնը սահանջում է մեղանից արտասուները աչքերիս եւ կակիծը սրբտերիս՝ չի մոռանալ այն վաստը, որ մեզ հասցուց նա լատինականութիւն ընդունելով: Մինչեւ այն ժամանակ մեր ազգը թէ՛ եւ տղէտ, թէ՛ եւ ցրտած, մի հաւատ էր դաւանում եւ համարում էր իրան հարազատ որդի Աջմիածնի Սուրբ-Աթոռին. բայց դորանից յետ հազարաւոր բաժանուեցան իրանց բուն հաւատից, թողին իցանց եկեղեցին եւ այլադաւանների հետ միաւորեցան: Հատ դառնացան դորա վերայ լուսաւորչալիւծը, տեսնե-

լով իրանց եղբարքը ըստ մկրտութեան սուրբ աւարանին հեռացած իրանցմէ, եւ դարերով սլաշտած սուրբ դաւանութիւնը ուրացած նոցամէն: ԱՏա՛ սյստեղից են այն կռիւները, որ մենք տեսնում ենք բոլոր անցեալ դարու ընթացքումը. սյստեղից են այն անհաշտութիւնները, որ ծաղկացան հարիւրաւոր խաղաղասէր գերդաստունների մէջ, որովհետեւ ընկեր ընկերից բաժանուեցաւ եւ քոյր եղբորից հեռացաւ: Թէ եւ ամեն բարեմիտ Հայ (ի հարկ է լուսաւորչակրօն) անցնիւր երախտապարտ է համարում իրան յարգելի գիտնական մխիթարեան կրօնաւորներուն եւ մանաւանդ իրան — Աբրա-հօրը, բայց մի եւնոյն ժամանակ չի դադարում առատորէն դուրս-թափել սրտէն հառաչանք եւ ախոսանք, որ այդպիսի ժրջան մեղուներ մեր անհոգութեամբ փակցրինք մեր գրականութեան աղքատիկ փեթակէն (улей), որոնց մեղքը այժմ ծանր դնով ենք ձեռք-բերում, իսկ խայթի չնէրը միշտ պատրաստ են մինչեւ ի մահ ծակծրկել մեր տրկար մարմինը: Թա՛ղ միւսները ասեն, թէ այդքան օգտարեութեան առաջ միւս փնասները ոչինչ են. բայց արդարասիրութիւնը ստիպում է մեզ ջրել այդ կարծիքը. պատճառ-որ՝ լուսաւորութիւնը, թէ եւ փոքր մի ուշ, բայց էլի իւր ճանապարհով կ'երթար, որովհետեւ այդ ժամանակներումը արդէն յայտնի երեւում էր բարոյական (моральный) սթափութիւն:

Թողնենք այս տխրալի յիշատակները եւ դառնանք Հարց Մխիթարեանց գլխաւոր աշխատութեանցը: Կախ եւ առաջ մխիթարեանք դարձուցին իրանց ուշադրութիւնը (вниманіе) բառարաններ եւ քերականութիւններ գրելու վրայ, գիտելով, որ միայն նոցանով կարելի է լեզուի մաքրութիւնը պահպանել: Այս սկիւնքին գեղեցիկ տիպով մեր նախնեաց հեղինակները (авторы) լոյս-ընծայել եւ տարածել աղբի մէջ, որով նորոգուեցաւ հին հայոց յըստակ ճաշակը եւ ամեն հայ շատ կամ սակաւ ծանօթութիւն ստացաւ իւր հեղինակների վրայ: Մխիթարեանք մեծ ճիգով պարսպեցան օտար լեզուներով, ի՞նչ Գունաց, Լատինաց, Իտալացոց: Եոցա պարամանց պըտուղներն են՝ — Հոմերոս, Պլուտարքոս, Վիրգիլիոս եւ:

1812 ին սկիւնքին ֆրանսերէն եւս սովորել եւ այն ժամանակ տըղուեցաւ Ազգերեանի երկու հատոր բառարանը: Եոյն լեզուից թարգմանեցին Ռուբէնի ահագին պատմութիւնները, Տելեմարի արկածքը (Ֆենելոնի), Բոստուէի ընդհանուր պատմութիւնը, Կրտսերոյն Անարարսեայ ուղեւորութիւնը (путешествіе) եւ շատ ուրիշ հեղինակութիւններ: Չուզելով ոչ մի լուսաւորեալ լեզու անտես-անել սկիւնքին անգլիերէնով-էլ պարագել, որի պտուղները եղան՝ — երկու հատոր բառարանը (հ. Ազգերեանի), Միլտոնի «Իրախտ Կորուսեալը», Ելիսեի «Գիշերային խորհրդածութիւն-

ները» եւ: Այսու ամենայնիւ մեզ զարմնալի է թլու՛մ — ի՛նչ պատճառաւ Կերմանացոց լեզուն անտես է արած. թէ եւ Գէսների «Մահ Աբելին» ունին թարգմանած, բայց մեզ կասկածելի է երեւում, որ բնագրից լինի, պատճառ-որ աւել մօտ է ֆրանսերէնին: Եոցա ուսերէն հիմնաւոր իմանալը ճըշտիւ չգիտենք. միայն թէ հատուկտոր բաներ ժամանակ առ ժամանակ տեղաւորելով «Բաղմալէս» օրագրի (журналъ), մէջ մեզ խմացնում են, որ այդ լեզուից-էլ զուրկ չեն:

Գիտելով մեր լեզուի ուրիշ արեւելեան լեզուաց հետ ունեցած կապակցութիւնը՝ մխիթարեանք մեծ ջանքով պարսպում են Պարսից, Աբրաբացոց նա եւ Սանսկրիտի լեզուներով: Որովհետեւ հայերու մեծ մասը Թուրքաց տէրութեան հպատակ (подданный) են, եւ դուցէ միաբանների մեծ մասն-էլ նոյն վիճակից են՝ առաւել դիւրին հաղորդակցութեան համար Թուրքաց լեզուն մեծ կատարելագործութեան մէջ է վանքումը:

Մեր գրաբառ լեզուն այն կատարելագործութեան մէջ է, որ արդէն ասեն եւս աւելորդ է: Մշտադալար կուսման ամեն հայի սրտումը հ. Աւետիքի, հ. Ինճիլճեանի, հ. Ազգերեանի, հ. Այլազովսիի եւ այլոց անունները, որոնք կարող են հայոց լեզուի վկայ ասուել, որոնց գրուածքը (հայկաբանութեան կողմանէ) ոչինչով չեն յետ-մընում Եւ երորդ դարու հեղինակներից:

Թէ եւ մեր ասածը օրէնք չի կարող լինել, բայց ամեն ուսումնական Հայ կարող է վկայել այս որ՝ — ո՛չ գրաբառ լեզուն եւ ո՛չ հանրագիտական (энциклопедический) ուսումը այնքան ծաղկած տեսնում ենք որպէս եւ իցէ Հայոց վարժատուններումը, որքան ծաղկած են նոքա Սուրբ-Ղազարի պարըսպի ներսը:

1773 ին մխիթարեան միաբանութեան մի մասը տեղափոխեցաւ Թրէստա եւ այնտեղից Վիենա: Այս տեղափոխութեան խակական պատճառը չ'իմանալով՝ չենք ուզում երկմլտի ապացոյցներ բերել — ի՛նչ էր շարժառիթը (поводъ) նոցա զատուելուն. բայց ուրախութեամբ սրտի տեսնում ենք, որ այդ փոքրիկ հատուածը օրէ օր աճում եւ ծաղկում է. դուցէ մի օր այդ տեղափոխիկ տունը աւել պըտղաբեր լինի քան թէ նա, որ բնիկ հողի վրայ մընաց: Գոցա գովելի աշխատութիւնը գլխաւորապէս «Աբրուս» լրագիրն է. բայց ի դորանից ունին շատ ուսումնական աշխատութիւններ աշխարհառ լեզուով, որոնք ըստ մեծի մասին լոյս-ընծայուեցան «Արամեան ընկերութեան» ծախսով: Այս ամեն արդիւնքները բըղխեցան մի մարդու հանձարէ (реши): Խաղաղութիւն ոսկերաց քոց մեծդ Մխիթար:

Առածներ

1). Ամեն առտուն շուտ զարթողը

Ծախու չի տալ ոսկի օղը:

2). Լեզուն առանց ոսկոռ է,—

Մարդու մեջքը կը կոտրէ:

3). Ուր տէր չէ սօղազին—

Տօպրան կ'առնու կրնակին:

4). Կրնկայ խուսաշ հալուը էրկան (մարդու) օձախը կրնարէ:

5). Ծերանաս— ծերին խաթրը կ'իմանաս:

6). Մըսընասը փեփոխելէն Օտտիկը չի մտիկնալ:

7). Առտուն ելլար երես-խաչով— բանիդ կէսը արած է:

Ինձ համար չէ՛.

(Նուէր Գրեգոր Միշլեւեանի բարի յիշատակին:)

Ինձ համար չէ՛ դարնան դալը,

Ինձ համար չէ՛ ծառի ծաղիկը,

Ուրախութեան սրտի գրգիտը,

Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ բարեկամաց

Մէկ-տեղ սիրով տօն կատարելը,

Օտտիկ օրուայ ուրախ ասելը

«Քրիստոս յարեալ» չէ՛ ինձ համար:

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,

Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,

Եւ միայն կուսի աչերը,

Նոցա արցունք չե՛ն ինձ համար:

Ինձ համար չէ՛ ծնօղաց լացը,

Ինձ համար չէ՛ աղճկայ տխրիւր,

Գերեզմանիս վրայ արտասուիլը

Քարեկամաց՝ չէ՛ ինձ համար:

Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի

Մտառ ու սար լուսաօրելը,

Քարնան վարդի երգ չի տաղերը—

Սոխակ ու վարդ չե՛ն ինձ համար:

Բայց ինձ համար կուգայ ծամը,

Կ'երթամ թշնամեաց պատերազմը,

Եւ մահառիթ սպանիչ դնդակը

Ա՛նդ պատրաստած է ինձ համար:

«Ազգային գրադարան»



NL0357086

Էրաժ շտանկան իւաղէր.

№ 1.

The first system of musical notation for 'Erzh Shantkanyan Iughayr' consists of two staves. The upper staff is in treble clef with a key signature of one sharp (F#) and a common time signature (C). It contains four measures of music. The lower staff is in bass clef and contains four measures of music, with the first two measures marked with a '1.' and the last two with a '2.'. The piece concludes with a double bar line.

The second system of musical notation for 'Erzh Shantkanyan Iughayr' consists of two staves. The upper staff is in treble clef with a key signature of one sharp (F#) and a common time signature (C). It contains four measures of music, with the last three measures marked with a '3.' indicating a triplet. The lower staff is in bass clef and contains four measures of music. The piece concludes with a double bar line.

№ 2.

The first system of musical notation for 'Erzh Shantkanyan Iughayr' (No. 2) consists of two staves. The upper staff is in treble clef with a key signature of one sharp (F#) and a 3/4 time signature. It contains four measures of music. The lower staff is in bass clef and contains four measures of music, with the first two measures marked with a '1.' and the last two with a '2.'. The piece concludes with a double bar line.

The second system of musical notation for 'Erzh Shantkanyan Iughayr' (No. 2) consists of two staves. The upper staff is in treble clef with a key signature of one sharp (F#) and a 3/4 time signature. It contains four measures of music. The lower staff is in bass clef and contains four measures of music. The piece concludes with a double bar line.

№ 1 ինձ հանար չէ.

№ 2 Հայոց ազգիկ.